ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆՈՂ ՆՈՐՄԵՐԸ

Ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին եկամտային հարկի Պարզեցված Հաշվարկը կամ Հաշվարկը (Հայտարարագիրը) ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում, ինչպես նաև եկամտային հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում, ֆիզիկական անձի նկատմամբ կիրառվում են պատասխանատվության նորմեր:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտային հարկի ինքնուրույն հաշվարկման (վճարման) պարտավորություն կրող ֆիզիկական անձի կողմից Պարզեցված Հաշվարկը հարկային մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում, ֆիզիկական անձի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ 10,0 հազ. դրամից մինչև 20,0 հազ. դրամի չափով:

Եկամտային հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է տույժ՝ 0.04%-ի չափով: Տույժը հաշվարկվում է ժամանակին չմուծված հարկի գումարի նկատմամբ՝ հարկի վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի՝ բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

Միաժամանակ, չկատարված եկամտային հարկի պարտավորության չափը, ներառյալ՝ տույժերը) 1,5 մլն. դրամ կամ ավելի կազմելու դեպքում, հարկային մարմնի կողմից, Օրենսգրքով սահմանված կարգով, հարկ վճարողի գույքի վրա կարող է կիրառվել արգելանք:

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

Եկամտային հարկի ինքնուրույն հաշվարկման (վճարման) պարտավորություն կրող կամ եկամուտների հայտարարագրման պարտավորություն ունեցող ֆիզիկական անձի կողմից Հաշվարկը (Հայտարարագիրը) հարկային մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում կիրառվում է նախազգուշացում:

Նախազգուշացումը կիրառելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հաշվարկը (հայտարարագիրը) չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝

→ 50,0 հազ.դրամի չափով, եթե ֆիզիկական անձը՝

- հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսացել է դրան նախորդող տարվա արդյունքներով 1,0 մլրդ. դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ).
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով հանդիսացել է իրական շահառու.
- հաշվետու տարվա ընթացքում ստացել է 20,0 մլն. դրամի չափով կամ ավելի փոխառություն.

→ 5,0 հազ.դրամ՝ այլ ֆիզիկական անձանց համար

Եթե ֆիզիկական անձը ներառված է վերը նշված կետերով սահմանված մեկից ավելի դեպքերում, ապա նրա նկատմամբ կիրառվում է այդ դեպքերի համար նախատեսված առավելագույն չափի տուգանքի մեծությունը:

Եթե տուգանքների նշանակումից հետո՝ 30 օրվա ընթացքում ֆիզիկական անձը չի ներկայացնում Հաշվարկը (Հայտարարագիրը), ապա այդ անձի նկատմամբ նշանակած տուգանքը կրկնապատկվում է:

Եկամտային հարկի ինքնուրույն հաշվարկման (վճարման) պարտավորություն կրող անձի կողմից եկամտային հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է տույժ՝ 0.04%-ի չափով: Տույժը հաշվարկվում է ժամանակին չմուծված հարկի գումարի նկատմամբ՝ հարկի վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի՝ բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

Միաժամանակ, չկատարված եկամտային հարկի պարտավորության չափը , ներառյալ՝ տույժերը) 1,5 մլն. դրամ կամ ավելի կազմելու դեպքում, հարկային մարմնի կողմից, Օրենսգրքով սահմանված կարգով, հարկ վճարողի գույքի վրա կարող է կիրառվել արգելանք:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ապօրինի գործունեություն է համարվում առանց օրենքով սահմանված պետական գրանցման (հաշվառման) կամ առանց հարկային մարմնում հաշվառման ձեռնարկատիրական գործունեության (բացառությամբ օրենքով արգելված գործունեության) իրականացումը:

Ապօրինի գործունեությամբ զբաղվելը, այդ թվում՝ գործունեության այն դեպքերը, որոնք չեն համարվում ձեռնարկատիրական գործունություն սահմանված են Օրենսգրքի 407-րդ հոդվածով:

Ապօրինի գործունեություն չի համարվում՝

- անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող այն գործունեությունը, որի մասով ֆիզիկական անձը հաշվառվել և ստացել է արտոնագիր.
- ֆիզիկական անձի կողմից անմիջականորեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը և իրացումը, ինչպես նաև ֆիզիկական անձի կողմից իրականացվող այն գործունեությունը, որը կարող է իրականացվել առանց պետական հաշվառման.
- ՀՀ-ում մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի այն գործունեությունը, որը վերագրվում է այդ մշտական հաստատությանը:

Ապօրինի գործունեության հայտնաբերման դեպքում, բացառությամբ անշարժ գույքը վարձակալության հանձնելու դեպքի, գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 50%-ի չափով, բայց ոչ պակաս 200,0 հազ. դրամից:

Վերը նշված խախտումն արձանագրվելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, խախտման կրկնակի և հետագա փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 100%-ի չափով, բայց ոչ պակաս 500,0 հազ. դրամից:

Անշարժ գույքը վարձակալության հանձնելը ձեռնարկատիրական գործունեություն համարվելու դեպքում վարձատու ֆիզիկական անձից գանձվում է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 500,0 հազ. դրամը: Նշված խախտումն արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 1,0 մլն.դրամը: